

## Նամակ Զինվորին



Բարև Արցախի աշխարհի պաշտպան և փրկիչ Զինվոր: Քեզ դիմում է Հաղթութի Մ. Մանվելյանի անվան միջն. դպրոցի 6-րդ

դասարանի աշակերտուհի Էլեն Միրզոյանը:

Ես և իմ բոլոր հարազատները հավատում ենք քեզ, քո արիությանը, հաստատակամությանը, քո տոկուն կամքին, աննկուն ոգուն և խիզախությանը: Համոզված ենք բոլորս, որ դու թույլ չես տա թուրքի կեղտոտ, արյունոտ ոտքը դիպչի մեր սուրբ հողին:

Աստված պահապան քեզ և քո բոլոր ընկերներին: Մենք աղոթում ենք առ Աստված, աղոթում ենք բոլորիդ համար:

Մենք արդար ենք, և արդարությունը կհաղթի:

Բարի մաղթանքներով

Էլեն Միրզոյան

Հաղթութի միջն. դպրոց